

## Վրթանես Փափազյան

### Մշուշ

#### Ա

— Վե՛ր կաց, Ստեփան, կես գիշեր եղավ... Ճրագի աղոտ ու ծխախառն լույսի մեջ, ավագոտ, սևացած, խոնավ տախտակների վրայից ծվենների մի կույտ ստվերացավ, բացվեց, ու նրա միջից գլուխը դուրս հանեց մի այլանդակ արարած:

Փոշոտ, միմյանց կպած յուղոտ մագերը ցնցվեցին երկար ստվերով: Դեղնած, մրոտ ու պատառոտուն ցնցոտիներ պարզվեցին լույսի մեջ, և մի զույգ խամրած ու քնաթաթախ աչքեր, արևակեզ ճակատի, խիտ հոնքերի տակից՝ սևեռեցին ձայնողի վրա:

— Վե՛ր կաց, ժամանակն է...

Եվ մինչ ցնցոտիները մի կողմ էին նետվում, ձայնողը շտապով հանվեց ու գնաց կծկվելու մութ անկյունի խշտյակի վրա:

Մի ամբողջ խուճբ էր այդտեղ, այդ գծուծ ու խարխուլ որջի մեջ, երկար սև թախտի վրա միմյանց կողքի շարված, անորոշ գույներով և կատարյալ յուղոտ վերմակների տակ կուշ եկած:

Ցած առաստաղի և հողե հատակին նեղ տարածության մեջ ճրագի լույսը, ծուխի և դրսից ներս հոսող խոնավ գոլորշու հետ, գերեզմանական մռայլ մշուշ էր գոյացնում... Անկյունում դրված կուժը, այս ու այն կողմ երևացող աղտոտ սնդուկները լիովին ծածկվել էին դեղին ավազով, նավթով ու ամեն կողմից ներս խուժող մութի խոշոր, սևացնող հատիկներով:

Ստեփանը ելավ: Կոճկեց հագուստը, անկյունից կուժն առավ, երկու բուռ ջուր նետեց երեսին, մի քանի կում խմեց, պահ մի կանգ առնելով հորանջեց, քորվեց, գալարվեց, ապա դանդաղությամբ գնաց դեպի դուռը:

— Շո՛ւտ գնա,— լսվեց վերմակի տակից,— Մկրտիչը քեզ է սպասում, որ գա քնի:

Եվ խրճիթի դուռը ճռնչաց:

Ստեփանը դուրս ելավ փողոց:

Անձրև էր: Շեշտակի, ծեծող ու խարագանող անձրև:

Սկսել էր մութը ընկնելուց: Այժմ ավելի սաստկացել՝ մղվում էր քամուց, բախվում նավթահորերի տախտակյա բուրգերին, ճղվում էր ամեն կողմ լճացած ջրի ու նավթի վրա, թրջում սև, թաց, լարծուն ու նավթից ճահիճ եղած գետինը:

Մեքենաներից դուրս պոռթկացող շոգին ծանրացել՝ խողովակներից վիժող մրալի ծխի հետ էր խառնվում և ճնշիչ ու հեղձուցիչ՝ սփռվում գետնի երեսին:

Եվ այդ տխուր, թաց ու մթին գիշերվա մեջ, կապարագույն-միաձուլ երկնքի տակ, նավթահորերի ճախարակները դռնչում էին աղմուկով, նասոսներից նետվող շոգու սյունակները պայթում էին, բուրգերի կատարներին պտտող լիսեռները տխրագին սուլում:

Քիչ հեռու, հնոցները վիշապային բոցավառ աչքերով փռնչում էին կատաղի, կարմիր ու ստվերախառն լույսով ներկում նավթի փրփուրը, գորշ, թանձր հեղուկը...

Հեռավոր, մութին մեջ գտնվող հանքերի միջից մի առ մի օղն էին պատռում շչակների ձայները և տխուր ոռնոցներով կես գիշեր էին ավետում:

Եվ այդ բոլորը խոնավության մեջ խլանալով, անձրևի բախման, մեքենաների ժամանակավոր դողոյունի, ճախարակների հնչեղ երեքման ընկերակցությամբ՝ ծանրանում էին նորից Ստեփանի սրտի վրա:

Դեռ չէր վարժվել: Մի ամբողջ տարի էր արդեն, բայց դեռ չէր սովորել այդ սոսկալի կյանքին:

Անընդհատ աղտոտ հագուստի մեջ, նավթով շաղախված՝ քնել էր նա այն որջում, ցրտի, անձրևի տակ ժամերով նստած՝ մեքենայի փոխանցող շարժումն էր ղեկավարել, գետնի խորքերից սև հեղուկը հանել, նրա մեջ թրջվել էր, բորբոսնել, ո՛չ կիրակի էր իմացել, ո՛չ տոն, ո՛չ ազատություն, ո՛չ էլ կանոնավոր, կշտանալու չափ հանգիստ...

Մի տարի էր այդ ամենը: Դեռ չէր ընտելացել:

Ամեն անգամ սիրտը ճնշվել էր, կոկորդը դառնացել: Մենակ նստած մուգ բուրգի ամայության մեջ, աղմկալից մեքենայի կողքին, հաճախ լացել էր:

Խեղճ Ստեփան...

Գիշերային այն միանվագ և մեքենական աղմուկի մեջ միշտ լսվում էին նրա դառն երգերի կտորները, որոնք խազ ու խազ դուրս էին նետվում բուրգի բաց դռներից և շատ ուրիշների վշտերի հետ՝ գնում էին ծանրացնելու շրջապատող մեղսալից մթնոլորտը:

Այժմ էլ գնում էր նա նորից այն սև, վերևից սրտմաշուկ կերպով ծորող նավթի տակ, մշուշոտ ու գազի խեղդիչ օդով լեցուն բուրգի մեջ նստելու: Այժմ, մի տարուց ի վեր, գուցե և հավիտյան այդ նույնը, անվերջ նույնը...

Եվ ոտները լարծուն գետնի վրայից քարշ տալով, թրջված ու խոնավացած՝ անցավ նա հին ու կոտորված գործիքների կույտի մոտից, ուր հսկում էր գիշերապահը լուռ, կծկված մի աղտոտ մուշտակի մեջ:

Անցավ ապա կաթսայատան մոտով: Բաց լուսամուտից երևաց հնոցավառը: Նստել էր կրակի առաջ, աթոռակի վրա և թեյ էր խմում:

Նախանձեց նրա կյանքին: Գոնե տաք էր այնտեղ, չէ՛ր մրսում, չէ՛ր թրջվում: Լուռ և տխուր՝ մտավ նավթահորի բուրգը:

Բարձր, հազիվ լուսավորված մի տարածություն էր այն մթին անկյուններով, ուր աղմկում էր մեքենան, հնչում էր ճախարակը և տասը րոպեն մի անգամ լսվում էր նավթահան գործիքից դատարկվող հեղուկի շառաչը:

Ճախարակի մոտ, տախտակյա բարձր ծածկոցի տակ չէր երևում Մկրտիչը:

Լսվում էր միայն նրա երգի խռպոտ, ժանգոտ ձայնը:

Ստեփանը կամացուկ ոտքը դրեց տախտակե աստիճանին ու բարձրացավ:

Չերթը իրենն էր այժմ: Մկրտիչի տեղը պիտի բռներ:

Մկրտիչը տեսավ նրան և երգը ընդհատեց:

— Եկա՛ր,— ասաց նա,— սպասիր «**ժալոնկան**» /Նավթահան գործիք:/ հանեմ... Մեկ տակից կքաշես, երկու՝ վերևից... Չայ խմե՛լ ես:

— Չէ:

— Լավ, ես կբերեմ քեզ համար: Անձրևը սաստի՞կ է:

Ճախարակն այժմ ծանրությամբ էր գործում: Չնայով իր վրա էր ժողովում հորիցը դուրս ելնող նավթոտ չվանը: Ցայտող հեղուկի ցնցուղները անպատիժ կերպով ողողում էին նստողների հագուստն ու դեմքը:

— Բիչ այն կողմը նստիր, որ շատ չթրջվես,— խրատեց Մկրտիչը,— գազը շա՛տ է նեղացնում: Դուրսը խոնավ է, չի ցրվում:

խոսում էին գոռգոռալով: Մեքենայի և ճախարակի աղմուկը խանգարում էր լսելու իրար:

— Ինչ էլ խո՞րն է...— գոռաց նորից Մկրտիչը,— տակի՛ցն եմ քաշում, կասես անտակ լինի... Չքնես, հա՛, թե չէ ժալոնկան որ գնաց վերև, էլ կառավարչի ձեռքիցը չես պոճնիլ:

— Չեմ քնիլ:

— Խաղ ասա, որ չքնես:

Ժալոնկան դուրս էր գալիս:

Մկրտիչը թողեց, որ գործիքը հորի բերնից քիչ էլ բարձրանա. հետո երկաթե երկար ձողով մղեց նրան հեռու, իջեցրեց, և երբ լեզվակը տախտակին առավ՝ հեղուկը սկսեց շառաչյունով հոսել տակառի մեջ:

— Դե՛հ, այժմ ա՛ռ,— Ստեփանին տվավ զսպիչ կոթը,— ես գնամ չայ բերեմ քեզ համար:

Ստեփանը տեղավորվեց: Գործիքը շարժեց, մեքենայի կաշին կոթովը մի անիվից մյուսն անցկացրեց և թողեց, որ ժալոնկան դողոյունով իջներ հորը:

Ապա մեջքը տախտակին տվավ ու լուռ մնաց:

Քիչ հետո Մկրտիչը բերեց թիթեղյա թեյամանը, մի բաժակ, երկու կտոր շաքար, հետո «բարի գիշեր» ասաց ու հեռացավ:

Մթին տարածության մեջ Ստեփանը մնաց մենակ:

## Բ

Էլեկտրական մի թույլ, տարածության ու բարձրության համեմատ շա՛տ աղոտ ճրագ էր, որ նշմարելի էր դարձնում մեքենայի փայլող մասերն ու ճախարակի շարժուն կույտը:

Ստեփանը թեյը լցրեց, բաժակը ձեռքն առավ ու սկսեց կում առ կում խմել՝ դիտմամբ ուշացնելով, շառաչյունով, բաժակը պնակին զարնելով:

Ապա մի քանի անգամ ուշադրությունը կենտրոնացնել ճգնեց նավթահան գործիքի ելևէջի վրա, սպասեց իջնելուն, հաշվեց թե մինչև քանի՛ համրելը ելնում էր դուրս:

Բայց այդ երկար չտևեց: Ուշադրությունը սպորդեց հեռացավ գործիքից, հորից, և Ստեփանը սկսեց լիովին այլ, այդտեղից ու ամբողջ հանքերից դուրս բաների մասին մտածել:

Կատարվեց այդ անզգալապես, ինքնիրեն:

Մտածեց նախ հետևյալ ազատ օրվա մասին: Տեսնենք, ի՞նչ էր անելու վաղը:

Նախ, իհարկե, մի կո՛ւշտ կքներ: Օ՛հ, շա՛տ կուշտ, եթե միայն մարմնի, հագուստի և անկողնի աղտերը թույլ տային, բնակարանի ճնշող օդը, անհամար լվերը հանգիստ թողնեին:

Կքներ, ոչինչ: Սովոր էր այդ ամենին:

Ապա անշո՛ւշտ կիջներ քաղաք: Ընկերներ կլինեին: Գինետուն կմտնեին իսկույն: Էլ ուրիշ որտե՞ղ, կամ ի՞նչ պիտի անեին, եթե եղանակը մնար այդպես անձրևային ու խոնավ:

Գինետուն, խմել, այս խանութից այն խանութ, հայրենակիցների խղճուկ տներ, դարձյա՛լ խմել, թղթախաղ, ապա պոռնկատուն...

Եվ վերջապես դարձյա՛լ դեպի նավթի թացությունն էին գալու, բուրգի ամայության, շրջապատող աղտ ու մուրի մեջ...

Ճախարակը հեռում էր. գործիքը նեֆտով լի՝ վեր էր ելնում: Հեղձուցիչ մի գագ մթնացնում էր լույսը: Բուրգի յուրաքանչյուր տախտակից, ամեն անկյունից նավթը կաթում էր, ծորում անընդհատ,

ընկնում էր ու ճղփում լճացած կույտերի մեջ, լվանում ճախարակը, Ստեփանի նստարանը, խարխուլ ծածկոցը, ոտներն ու շորերը...

Մարդկային ո՛չ մի ձայն:

Մեքենան ու ճախարակը, անձրևի շառաչն ու լիսեռի սուլումը, շոգու պոռթկոցը և հնոցի հեռավոր մռնչյունը... Դրանք էին ձայները, ձայների մռայլ համերգը:

Եվ դեռ որքան երկար, երկար պիտի նստեր այդ ամենի մեջ: Ամբողջ վեց անընդհատ ժամեր անշարժ, բուրգի երեք դռներից փչող քամիների տակ, անկողնից նոր ելած, դողալով ու սրթսրթալով:

Ատամները կափկափում էին, թմիր էր գալիս վրան, քնել էր ուզում:

Ու չքնելու համար՝ սկսեց երգել:

Երգել ու մտածել:

Բերանը երգում էր, իսկ միտքը գործում այլ ուղղությամբ: Ուստև էր նա երգից, նավթահանքերից, քաղաքից հեռու, շա՛տ հեռու: Մի վայրկյանում անցնում էր լեռ ու ձոր, գն՛ում և գնում...

Ու հավիում էին, մինչև վերջինը անհետանում մեքենաները, նրանց շռիղոջ չքանում էր անգամ այն ահռելի համառությամբ և հոգին հոշոտող ծորը, որ ուղեղն էր ծեծում անվերջ կաթիլներով:

Չկար նույնիսկ, չէ՛ր զգում այլևս ոսկորների խորքը փորող այն խուլ սոսկալի ցավը, որ սաստկանում էր ամեն անգամ...

Այժմ սլացել-անցել էր նա տարածության մեջ և գնում էր հրճվանք կանգ առնելու մի ծառայից հովտի խորքում:

Եվ այն՝ զարնանային շքեղ ու պայծառ օրով, զով արևածագին, թռչունների զվարթ համերգի, առվակների հանգստաբեր խոխոջի և ծառերի մեղմ շշուկի գիրկը:

Գյուղն էր այն, իր գյուղը, ծանոթ ծառաստանն ու ջրերը, հովն ու համերգը, դաշտն ու հովիտը:

Ծաղիկների, այն անհամար գույնզգույն ծաղիկների բուրմուխքը լցրել էր օդը:

Բուրում էր հողը, բուրում էր յուրաքանչյուր ծիլ ու խոտ:

Այլևս նավթ չէ՛ր բուրողը, ո՛չ: Գետինն այդտեղ՝ զգվելի յուղոտ ու թաց հող չէ՛ր ծածկողը. սև նավթակույտեր և կամ աղաջրի բաց արնեգույն լճակներ չէ՛ին նրա շուրջը վիստում, այլ միմիայն ջինջ ու կարկաչուն առվակներ, պսպղուն, սառնորակ աղբյուրակներ, ցոլուն ու վե՛տ-վետ խայտանքներով ծփացող լճակներ... և այդ ամենին ստվերող շշուկայից ուռիներ, շքեղահասակ բարդիներ...

Ու տեսնում էր նա այդ ամենն իր շուրջը, գնում նրանց միջով, անհուն բերկրությամբ վայելում էր զեփյուռն ու կարկաչը, շշուկն ու համերգները և մոտենում գյուղին:

Իր գյուղն էր այն սարալանջի վրա ծիծաղկոտ կայտառությամբ պսպղացող, ծառերի հովանիով գուրգուրվող գյուղը:

Ծանոթ դեմքեր հաջորդում էին միմյանց: Նախ՝ պայտարն էր, նստած իր խարխուլ խանութի դռան առաջ: Մուրճի ձայնը աշխարհքն էր բռնել: Մի կողմից պայտեր էր դարբնում, մյուս կողմից՝ մոտը նստած մուխսի Չակոբին, այն միամիտ ծերունուն, կլլեցնում էր իր հրեշավոր սուտերով համեմված նորությունները:

Այնուհետև երևում էին մի քանի ուրիշ գյուղացիներ, խանութպան Խաչոն, տիրացու Սարոն, այլև ծալմաշ ու գունատ վերարկուով Տեր-Սրապիոնը, որ ժպտում էր նրան և աջ պարզում համբույրի:

Ահա և ճռճացող սայլեր, որոնց քաշում են փնչալով քայլող գոմեշներ: Հետո՝ նախիրն է գյուղի: Միմյանց են խառնվել բառաչ ու մայուն, շների հաչոցներ ու հովիվների, նախրեպանների կանչեր...

Քիչ հետո առուն էր, վրան ջրաղացը: Գործում էր: Չաչանակի չոր ու արագ ճաթտոցների հետ խառն՝ քարերի խուլ շփումը հասնում էր ականջին: Հասնում էր նաև աղացվող ցորենի հոտը. այն հատուկ փխրոժեղի բուրմունքը, որ միշտ գալիս էր ջրաղացներից:

Առվից նա ուտնում էր աշխույժով: Մոտ էր այլևս իրենց տունը: Բայց նա առաջ մեկ կռանում էր ձեռքերն ու երեսը լվանում սառնորակ ջրի մեջ ու դառնում դեպի իրենց խրճիթը:

Օ՛հ, հայրենական կիսավեր, միտոտ ու անպաճույճ սիրելի խրճիթ: Որպիսի՜ հաճույքով նայում էր նա յուրաքանչյուր քարին, գերանին, ո՛րտք էր դնում հողոտ պատշգամի վրա, ժպտում էր օճորքից կախ ընկած խնոցիին, զգվում՝ աղտոտ ու քծնող գամփռին, նստում կոշտ նստարանի վրա, գիրկն առնում մեջքն ուռցնող ու քսմսվող կատվին...

Եվ մայրը... Ահա՛ իր պառավ, իր կորաքամակ մայրը՝ մի՛շտ գործունյա ու շարժուն, ձեռքերը կոշտացած, միտոտ ու այրոտ...

Նոր էր թնկիրը վառել, աչքերն էր տրորում ծխից, սևացել էին ձեռքերը. բայց նա որքան հրճվանքով վազում էր դեպի նրա գիրկը, սիրով համբուրում ձեռքերը, գլուխը դնում նրա կրծքի վրա ու հեկեկում-լալիս էր կրած տառապանքները, քաշած տանջանքները...

Շրջապատում էին ապա նրան՝ քույրերն ու եղբայրը: Ամենքը ուրախ էին, ակներև ուրախ, որ իրենց Ստեփանը եկել էր առողջ, տո՛ւն վերադարձել ու պանդխտության մեջ չէր մնացել՝ կորել կամ մեռել:

Սառան, մեծ քույրը, դուրս էր նետվում հո՛րն իմաց տալու: Դրացիները ժողովվում էին, ներս էին լցվում ազգականները, ծանոթ կանայք, ամբողջ գյուղը գրեթե:

Ու նա ամենքին բարևում էր, ամենքին ճանաչում: Ահա հորաքույրերը, մոր կողմի ազգականները, հորեղբոր ընտանիքը, տերտերակիսն ու երեցփոխի կիսը...

Բայց հանկարծ նա տեսնում էր մի կին ևս, որից սիրտն սկսում էր ուժգին կերպով բաբախել:

Թագուհու մայրն էր այն: Նա էլ էր աչքալուսանքի եկել: Բարևում էր սիրալիր, համբուրում էր նրան իր որդու պես, ժպտում էր, զննում բարեկամաբար:

Արդյոք վատ չէ՞ր հագնվել: Ո՛չ, ինչո՞ւ՝ վրան սև մետաքսե արխալուղ կար, մահուղե չուխա՛ւ էլ ուներ այժմ, արծաթե գոտի կապած, երկար ու փայլուն կոշիկներ, մորթե նոր գլխարկ...

Ճշմարիտ է, երկար էր տառապել նավթի մեջ, գրեթե բորբոսնել էր խոնավությունից, սակայն նա այժմ պիտի ցույց տար գյուղացոց, որ ո՛ւնի հագուստ և որ չի վերադարձել ձեռնունայն...

Որովհետև, ո՛չ, Ստեփանը վատ տղա չէ և ո՛չ էլ շռայլ ու մոլի...

Իրավ է, գունատ էր մի քիչ, գուցե և նիհար, տգեղացած, բայց, օ՛հ, մի քանի ամի՛ս միայն իրենց սքանչելի լեռների ջրի մեջ, մի քանի ամի՛ս միայն հեռու նավթից ու ծխից՝ և նա, դաշտային աշխատանքով կազդուրված, կլիներ դարձյալ՝ նախկին հուժկու, լայնալանջ, առողջ Ստեփանը...

Այո՛, այդ անշուշտ կլիներ: Թագուհու մայրը հիմար կին չէր, նա՛ էլ կարող էր մտածել այդքանը:

Բայց ա՛խ, որքան կուզեր տեսնել իրեն — Թագուհուն:

Ո՛ւր կլիներ արդյոք այժմ: Տա՛նը, թե՛ ընկերուհիների հետ այգին և կամ բանջար ժողովելիս:

Օ՛, սքանչելի՛ էր Թագուհին. իր ամբողջ եռությունը համակող, մատղաշ սրտի տրոփը ղեկավարող այդ թարմ, իրենց լեռների պես փարթամ աղջիկը, որ անուշ է պարտեզի մանուշակի նման, ցանկալի, որպես ջուրը՝ պապակվող շրթունքների համար և գողտրիկ՝ բարձր գագաթների ձյունների հալոցից հետո բուսնող ճնճաղիկի կամ կակաչի նման:

Տեսնե՛լ, մի անգամ տեսնել, հասկացնել, որ սիրում էր նրան՝ զգացմունքներից պայթելու մոտ իր սրտի ամբողջ թափով, սիրում էր՝ դեռ չհղփացած ցանկության բոլոր ուժգնությամբ:

Բայց ա՛հ, այն ի՛նչ էր, որ հանկարծ տեսավ ահա այնտեղ, հետզհետե առաջ եկող ու պարզվող մշուշի խորքում:

Սոսկո՛ւմ ու սարսափ: Կանայք էին նորից, բայց որպիսի՛ կանայք: Օ՛հ, այդ նրանք էին: Նրանք, որոնց մոտ էին գնում ինքն ու իր ընկերները՝ գինետան մեջ անասունների նման հարբելուց հետո:

Ահա՛ շպարած դեմքե՛ր, լայիռ ժպիտ շրթունքներին, խենեշ շարժվածքներով ու խռպո՛տ, սարսուռ ազդող ձայներով...

Ու մոտ էին գալիս, խառնվում յուրայինների մեջ, քսվում Թագուհու մորը...

Օ՛, այդ կանայք, որոնց մոտից ելնելիս ամեն անգամ նա լվացել էր իր շրթունքները, ուր դրոշմած էին եղել վարձու առած համբույրները:

Ամեն անգամ, իրավ է, զգվանքով դուրս էր նետվել այդ կանանց մոտից, բայց և մի քանի օր հետո դարձյա՛լ հարբել էր և դարձյա՛լ գնացել՝ իր զգվանքները շռայլելու նրանց:

Այդ ժամերը, այդ սոսկալի՛ օրերը... Պատկերանում են ահա. գինետո՛ւն, պոռնկատո՛ւն, փողոցնե՛ր. . . և վերջապես ծորող նեֆտի տակ, հակադարձ քամիներով լի բուրգի մեջ՝ ոսկորները կրծող ցավերից գալարված...

Սակայն չէ՞ որ այդ բոլորն անցել էին այլևս:

Չէ՞ որ նա իր գյուղումն էր այժմ, հեռու՝ սերը վաճառքի դնող զգվելիներից. այնպիսիներից, որոնք գերագույն վայելք համբույրը փոխել էին անարգ առևտրի դաշնադրության... Հեռո՛ւ գինետնից, շպար խենեշ պարեր ու ամոթանք բերող պազոտ շարժումներից:

Այժմ նա իր հայրենիքի մաքուր մթնոլորտի մեջն էր այլևս, պայծառ երկնքի տակ, մոր կողքին, իր սիրած ու պաշտած Թագուհուց մի քանի քայլ հեռու, կարո՛տ նրա զգվանքներին, պապակող նրա համբույրներին...

Այժմ նա իր Թագուհուն, մի՛միայն Թագուհուն կուզեր, նրա՛ն էր ձգտում բուռն փափագով:

Այլևս նա չէ՛ր տեսնիլ նավթն ու մրոտ շրջապատը, մուր անձրևող երկինքն ու ծուխի մեջ սևացած գինետունը. այլևս չէ՛ր քնիլ միշտ վախվիտելով՝ թե ահա՛ կգարթնեցնեն, անկողնից դուրս կմղեն, կնետեն մաղող անձրևի տակ ու կասեն.

— Վե՛ր կաց, Ստեփան, գնա՛ գործելու...

Ո՛չ, այլևս չէ՛ր վերկենալ նա անժամանակ, կես գիշերին: Կքներ կո՛ւշտ, օհ, շա՛տ կուշտ, քունը չէին խանգարի ո՛չ մեքենայի դռնչուևը, ո՛չ էլ անտանելի ճախարակի ճռինչը...

Հապա ժայռնկա՛ն, այն անիծյա՛լ ժայռնկան, որ սպանիչ միատեսակությամբ մտնում-ելնում էր երկրի խորքերը և շառաչունով ոսկի՛ էր հանում լցնելու... Նրանց գրպանները, որոնք ո՛չ մի րոպե չէին սստում ծորող գարշ նավթի, մեռցնող խոնավության և հոշոտող քամիների մեջ...

Հեռո՛ւ, հեռո՛ւ այլևս այդ ամենից:

Նա այժմ իր արտը կգնար, եզները կլծեր, գութանի մա՛ճը ձեռք կառներ, հո՛ղը կակոսեր և լեռները կթնդացներ հնչեղ հորովելներով, զվա՛րթ երգերով...

## Գ

... Սոսկալի մի շռինդ էր, որ լսվեց առաջ: Հետո կարծես շենք փուլ եկավ, և բազմաթիվ ռումբեր պայթեցին միմյանց ետևից:

Ցնցվեց Ստեփանը, գլուխն առավ տախտակե ծածկոցի պատին և նա վեր թռավ:

Սկզբում չհասկացավ թե ի՞նչ էր այն, որտե՞ղ էր ինքը, ինչո՞ւ պայթումները շարունակվում էին կատաղի և տևողական հարվածների նման և ինչո՞ւ շուրջը մութն էր, խոնավ...

Աչքերը տրորեց ու մի վայրկյանի շվարումից հետո սկսեց ըմբռնել կատարվածը:

Բնագղաբար, արագ շարժումով դուրս մղեց ճախարակի կաշին, հետո ցած ոստնեց, վազեց դեպի մեքենան և շտապեց կանգնեցնել նրա տագնապալից պտույտները:

Եվ երբ վերջացրել էր այդ ամենը, վեր նայեց ու գունատվեց:

Ժալոնկան էր: Բարձրացել էր վեր, անցել լիսեռից ու փշրելով բուրգի կատարը՝ շառաչունով նետվել նրա գառիվայրի վրա:

Քնել էր: Մի թուպե՛ր էր միայն քնել և այդ թուպեի մեջ տեղի էր ունեցել փորձանքը:

Ու գյուղ, լեռ և ձոր, կարկաչ, համերգ, սեր և հայրենի տան հրապույրը վայրկենապես ցնդեցին որպես շոգի, հալվելով անհետացան՝ որպես չափազանց գեղեցիկ երագ:

Նորից իրեն նա գտավ նավթի, խոնավ, մթին բուրգի միջավայրում, նորի՛ց անտանելիորեն ծորող հեղուկն ու ոսկորները գալարող ցավերը մաշել սկսեցին նրա հոգին:

Առաջին եկողը գիշերապահն եղավ:

Աղմուկը հանել էր նրան իր կծկված դրոթյունից: Չէր հասկացել եղածը, բայց աղմուկի մեծությունը ենթադրել էր տվել, որ փորձանք է տեղի ունեցել ներսում:

Ու վազում էր օգնության:

Մեքենան կանգ էր առել: Մեծ անիվը անշարժ՝ պսպղում էր: Հաջորդել էր խորին լռություն: Խավարը, անսովոր լռության մեջ, կարծես ավելի էր թանձրանում: Հեռու անկյուններում մեկ-մեկ ցուլում էին նավթի շիթեր, որևէ երկաթե ձողի մի կող: Անթափանց մութը ջնջում էր բուրգի պատերը և շրջապատն ամբողջ՝ անհուն տարածության վերածում:

Ստեփանը գլխիկոր՝ մնացել էր կանգնած մեքենայի կողքին: Ո՛չ իսկ մտածել էր կարողանում: Մի տեսակ անտարբեր բթություն համակել էր միտքը: Խուլ կսկիծն էր միայն, որ այրում էր ոսկորների ներսը, այլև քնելու պարզվել-քնելու ահռելի փափագը:

Գիշերապահը մոտեցավ, զննեց նրան մոտից ու ճանաչեց:

— Դո՛ւ ես,— ասաց նա,— ի՞նչ եղավ, ի՞նչ աղմուկ էր այն:

Ստեփանը բութ հայացքն ուղղեց դեպի նա և անտարբերությամբ պատասխանեց.

— Ժալոնկան էր: Դուրս թռավ...

Ծերունին հասկացավ: Վեր նայեց:

— Վա՛յ,— գոչեց նա,— քնե՛լ էիր:

Մի թուպե Ստեփանը ոչինչ չխոսեց: Հետո տրորեց ճակատն ու մռմռաց.

— Չգիտեմ... Մտածում էի...

— Մտածո՞ւմ էիր...— զարմացավ գիշերապահը:

Հետո գլուխը երերցուց, նայեց նրան մի թուպե և խրատական ու հանդիմանական խառն շեշտով ասաց.

— Զե՛ղ ի՞նչ կսագի ախր մտածելը, հը՛... շա՛տ հարուստ ես, որ դեռ գործի ժամանակ մտածում էլ ես...

Կարծես նախատել էր ուզում նրան՝ այդպես անօրինակ շռայլության համար:

Դարձյալ գլուխը ցնցեց, շուռ եկավ և դեպի դուռը գնաց:

— Պիտի իմաց տալ կառավարչին,— ավելացրեց նա հեռանալով:

Ու Ստեփանը նորից մենակ մնաց մեքենայի կողքին արձանացած:

Բթութեան վայրկյանը սկսում էր անցնել, միտքը գործում էր այժմ: Դառն իրականության գիտակցությունը գալիս էր հուզելու նրան:

Կգար կառավարիչը մի քանի րոպեից հետո: Կգար՝ քաղցր քնից ու փափուկ անկողնից կորզած, հանած, հետևապես դյուրագրգիռ, բարկացած, խիստ խոսքերը շրթունքներին և գուցե հենց ճանապարհին, Ստեփանին դուրս նետելու վճիռն էլ արած:

Եվ ահա մյուս օրը ստիպված պիտի լիներ դարձյալ ընկնել նավթահանքերը ու նոր տեղ որոնել:

Կգտնե՞ր արդյոք շուտով նոր գործ, երկար պարապ չէ՞ր մնալ և չէ՞ր ստիպվիլ ինչայած դրամագլխիցը ուտել:

Ունե՞ր, այո՞. մի հիսուն ռուբլի կար:

Պահում ու մեծացնում էր այն հուսով, որ գյուղ կվերադառնար երբևիցե և կվճարեր իրենց պարտքը:

Իսկ եթե այժմ պարապ մնար երկար, պիտի ստիպվեր ձեռք տալ գումարին: Ու քանի պակսեր փողը, այնքան կհեռանար հայրենիք վերադառնալու հույսը:

Արդյոք չգնա՞լ հենց այժմ, վաղը: Թողնել ամեն ինչ, հավաքել եղածը, բավականանալ վաստակածովը, գնալ և մնացած պարտքը այնտեղ, դաշտային աշխատանքով վճարել:

Օհ, գնա՛լ, գնալ... Չմնա՛լ այլևս այդ սև ու մռայլ երկնքի տակ, աղտոտ-մրոտ օդի մեջ և այն միշտ տկար, տխու՛ր...

Ու դարձյալ տրոփել սկսեց սիրտը, դարձյալ ախորժ ջերմություն համակեց անձը: Դեմքը, որ ճրագի աղոտ շողքից հագիվ էր լուսավորվում, տարտամ հույսերի, շվարման ու դառն մորմոքի ցոլքեր ունեցան հաջորդաբար: Դարձյալ երազներն ու խոլ հույսերը խառնվում էին գլխում:

Դարձյալ բերկրությամբ անձնատուր էր լինում երջանիկ անուրջների, որոնք նրա կարոտանաց հմայքի տակ՝ ստանում էին այնքան գունագեղ պատկերավորումներ:

Սակայն այլևս առաջվան նման որոշ ու ջինջ չէին նրանք: Անընդհատ մթնանում էին՝ մռայլ բուրգերի, մրուր մաղող ամպերի և հոսանուտ մշուշի քողավորումով:

Եվ մտում էր նա այնտեղ, խավարի անսահմանության մեջ սմբած ու խորդացող մեքենայի առաջ կանգ առած:

Դատապարտվելուն էր մտում:

Անձկությամբ, գրեթե այրող փափագով՝ սպասում էր խիստ խոսքերի, վնդվելու:

Սուր պահանջ էր այդ: Ձաղկվելու մարմաջ, որ սփոփանք կլիներ նրա համար:

Ու հոգնած էր. ա՛խ, ինչպե՛ս հոգնած, մահո՛ւ չափ խոնջեցած: Գային ազատեի՛ն նրան, դուրս նետեի՛ն, ծեծեի՛ն նույնիսկ, միայն թույլ տային գնա՛լ, հեռանա՛լ...

Չէ՛ր հիշում որքան տուեց այդ սպասումը, երբ լսեց, որ մեկը գոչում էր նրա երեսն ի վեր:

— Ի՛նչ ես մեխվել այստեղ. գնա՛ կորիք գործիդ: Մինչև լույսը չբացվի, ոչինչ անել չի կարելի:

Վարպետն էր: Կառավարիչը և ո՛չ իսկ դուրս էր եկել սենյակից: Հրամայել էր վարպետին իմացնել:

— Գնա՛մ ուրեմն, — սթափվեց Ստեփանը և տեղիցը չջարժվեց:

— Հա՛, կորիք... — գոռաց վարպետը, — իսկ վաղը կտեսնենք, թե կառավարիչը ինչպես պիտի պատժի քեզ՝ քնելուդ համար:

— Չէի քնել:

— Ուրեմն մի՛տքդ վրադ չէր:

— Այո՛, վրաս չէր:

— Եվ որտե՞ղ էր, հիմա՞ր,— բարկացավ վարպետը,— ծառայում ես այստեղ, իսկ միտքդ գնում է ուրի՞շ տեղ:

— Ես ի՞նչ անեմ... — ուզեց արդարանալ Ստեփանը նորից: — Զենց այնպես, բնագդական քայլ էր այդ: Սովորություն միայն:

— Լռի՛ր,— որոտաց վարպետը,— դեռ խոսում էլ ես: Ժալոնկայից բացի, ուրիշ ո՛չ մի բանի վրա իրավունք չունիս մտածելու, հասկանո՞ւմ ես: Ծառայում ես, փող ես ստանում աղայից, ուրեմն և միտքդ միշտ ծառայությանը պիտի լինի...

Ապա, երբ Ստեփանը սփոփված կատաղի շեշտերից ու կծու խոսքերից անցնում էր դուրս գնալու, վարպետը ձեռքը նրա ուսին դրեց ու ասաց մեղմ.

— Գնա՛, գնա... կասես հիվանդացար... մի կերպ կազատենք քեզ... Ասենք ճիշտ էլ կլինի. հիվանդ ես... Այդ ի՞նչ է գույնդ. հազի՛վ ես ոտքի վրա կանգնում...

Ստեփանը ինչ-որ բան մռմռաց քթի տակից՝ շնորհակալության նման:

Հոգնածությունն ու շվարունը կարկամեցրել էին միտքը: Լեզուն չէր գործում: Գլուխը ծանրանում էր հետզհետե և անտանելի բեռան պես՝ կքում մարմինը:

Վարպետը ձեռքը թափահարեց և դուրս գնաց:

Լսվեց պահ մի նրա ոտների հանած ճղփյունը թաց գետնի վրա, և քիչ հետո երկար ստվերը անհետացավ մշուշի խորքում:

Ստեփանը կծկվեց դրսի խոնավությունից ու քայլեց:

Հարբածի նման անցավ լճակներից, ոստնեց առվակներից և քիչ հետո մտավ դեղին մառախուղով լի բնակարանը:

Առանց հանվելու ընկավ առաջին հանդիպած ցնցոտիների վրա: Այլևս ուժ չկար: Մարում էր:

Գլխի մեջ տեսնոտ մի շրջապար, մտքերի և հուշերի այլանդակ մի հորձանք խառնվեցին իրար: Հրեշավոր, անկապ, միմյանց արագ հաջորդող և անմիտ պատկերներ մղում էին միմյանց, ոստնում ու գալարվում, ապա հալվում էին և անհետանում. . .

Քիչ հետո դրան հետևեց ընդհանուր մի անեություն, և թմիրն ու մոռացությունը իրենց խավարի մեջն առին, կլանեցին այդ ամենը...

## Դ

Միայն գործից դուրս հանեցին: Ուրիշ ոչի՞նչ: Ո՛չ տուգանեցին, ո՛չ հանդիմանեցին: Կառավարչի երեսն անգամ չտեսավ: Հաշվապահը կանչեց, հաշվեց, ռոճկի մնացորդը պարզեց նրան ու ասաց.

— Ուրիշ տեղ գտիր քեզ համար:

— Դո՛ւրս եք անում:

— Այդպես է հրամայված:

Չարմացավ, որ չհուզվեց անգամ: Սպասածներից մեկն էր այդ: Բացի դրանից, կասես բթացել էին ջղերը:

Առհասարակ, առավոտյան զարթնելուց հետո, զգում էր իրեն շա՛տ հոգնած, ջարդված ու թույլ: Ուղեղը չէր գործում. մշուշի մեջ էր ամեն ինչ. կարծես միտքն էլ տկարացել էր, մյուս զգայարանքներն էլ:

Առավ փողն ու գնաց:

Երբ ընկերները տեսան, հասկացան: Լուռ մնացին: Ոչ ոք խորհուրդ չտվավ: Ինչո՞ւ խորհուրդ: Խորհուրդը չէր օգնիլ այդտեղ: Մխիթարանքն անգամ ավելորդ կլիներ:

Բացի դրանից, տեսնում էին, որ տղան ո՛չ հուսահատի դեմք ուներ, ո՛չ էլ դժբախտի:

Ենթադրեցին, որ փո՛ւյթն անգամ չէր արտաքսվել:

Եվ իրավ, ինչո՞ւ հուսահատվել, վիշտն ու դժբախտությունը օտարի առաջ պարզել: Ի՞նչ օգուտ այդ ամենից: Չէ՞ որ ամեն բանվոր սովոր էր դրան և ավելի վատերին:

Ունեցածը ժողովեց Ստեփանը, տեղավորեց սնդուկում:

Կարծես մեքենա լիներ. անզգա, դանդաղ, անգիտակցորեն գործող ինքնաշարժ:

Չետո պահ մի շվարած՝ ելավ կանգնեց բնակարանի առաջ, գնաց, նայեց խանութներին, ցրտի դեմ՝ նստեց ինչ-որ աղտոտ տախտակների վրա, մինչև իսկ մի ժամի չափ մնաց այնտեղ անձրևի տակ, թմրածի նման... և՛ վերջապես դարձյալ բնակարան մտավ ու քնեց:

Ավելի ճիշտ՝ թմրած ցած ընկավ: Մոտով անցնողը քիչ նայում էր նրա վտիտ ու մեռելատիպ դեմքին, գլուխը երերցնում ու անցնում:

— Հիվանդ է,— ասաց մեկը,— պետք է հիվանդանոց ուղարկել:

Երեկոյան դեմ, սակայն, Ստեփանը զարթնեց ելավ: Հինգ րոպեի չափ անկողնի վրա նստած, անշարժ հայացքով նայեց տարածության մեջ: Չետո իջավ, լվացվեց, հագավ մաքուր շորերն ու գնաց դեպի կայարան:

Տեսնող եղավ, որ սնդուկից թղթեր և ծրարներ էլ հանեց, չուխայի ծոցը կոխեց:

Ընկերներից մեկը փորձեց խոսեցնել նրան:

— Գիտե՞ս, Ստեփան, հիվանդ ես երևում, գույն չկա վրադ. գնա՛ բժշկի մոտ:

Ստեփանը կանգ առավ, լսեց, ապուշի նման մի րոպե նայեց խոսողին, հետո անխոս հեռացավ:

Սկսում էր մթնել: Աշնանային զգվելի, թաց ու անձրևոտ կարճ օրեր էին: Փոքր-ինչ ևս — ձմեռը բախելու էր դռները: Չգալի ցուրտ էր արդեն. մանավանդ՝ խոնավ:

Բայց Ստեփանը ոչինչ չէր զգում:

Քայլում էր. բարակ չուխա էր հագինը: Առանց կրկնակոշիկի, ցեխերի նավթակույտերի միջով, նեղ ու լարժուն շավիղից էր գնում:

Կարճ ճանապարհ էր այդ: Չէր շտապում. կիսաներ միշտ որևէ գնացքի:

Շուրջն էլ չէր նայում: Մի տեսակ անզգայություն համակել էր նրան: Սառն ու անտարբեր՝ թեթև ակնարկներ էր միայն նետում նավթահորերին, կաթսաների բոցավառ երախներին ու անցնող աղտոտ-մրոտ բանվորներին:

Նույն անտարբերությամբ էլ տոմսակը գնեց, իսկույն վագոն մտավ և կծկվեց մի անկյուն:

Հոգնած էր, անհունապես հոգնած: Կուզեր նստել, ցատկել, ոչինչ չզգալ:

Թվում էր թե երագի մեջ էր կատարվում ամեն ինչ: Գնացքը շարժվում էր, սլանում էին մուլթ տարածության մեջ ճրագներ, տների ստվերներ, հետո՝ դաշտ, թաց, ճապաղած ջրերով լի հարթություններ, ինչ-որ լճեր, ապա ծխի սյունակներ, բազմաթիվ կայծեր, շենքեր...

Նույն տեսակ, երագի մեջ եղածի նման՝ իջավ գնացքից, անցավ բազմության միջով, ելավ ինչ-որ փողոց ու քայլեց:

Գնում էր ստվերի պես, մշուշալից ուղեղով և մշուշոտ փողոցներից:

Մի քանի անգամ կանգ առավ ամայի և մուլթ անկյուններում, ճակատը կնճռեց, ճիգ գործեց խորհելու՝ թե ո՞ւր էր գնում և ինչո՞ւ:

Ամեն անգամ սակայն մի բան արգելում էր մտքերի կապակցությանը: Մտածությունները ոստոստում էին, թերատ պատկերների մի քառս էր գոյանում:

Գնալ ծանոթների մոտ: Օրինակ, Կարապետենց տունը: Ընտանիք ուներ: Բանվոր էր Սև քաղաքում: Տանը չէր լինիլ, բայց կգար... Սակայն չիսմե՞լ առաջ մի բաժակ օղի, մի տաք բան: Մրսում էր, խոնավությունը թափանցում էր կուրծքը...

Գամե՞լ էին, ինչ է, իրեն այդտեղ, որ չէր կարողանում շարժվել: Չէր էլ ուզում գնալ: Նստել կուզեր...

Գնալ այն կնոջ մոտ. . . Ա՛հ, այո՛, գնալ: Նվագել, պարել, խմել. . . Արդյոք ե՞րբ էր մեկնում գնացքը դեպի իր գյուղը. . . Գնա՛լ գյուղ. . . Իսկ շորերն ու սնդո՞ւկը. . . Ո՛չինչ, եղածը ծոցումն էր. . . փո՞ղը, այո, ծոցումն էր բոլորը. . .

Փորձեց շարժվել տեղիցը: Ուժ տվա՛վ, քայլեց:

Չուխան էլ չէր օգնում: Խոնավությունը մտնում էր կարծես ոսկորների մեջ: Կուրծքի վրա կարծես մեծ քար էին դրել. . . Օ՛հ, որքա՛ն դժվար էր շնչում: Օ՞ղ չկար, ի՞նչ է:

Բայց քայլեց, դանդաղ, քարշ գալով քայլեց և քիչ հետո չէր հիշում ի՞նչպես, ինչո՞ւ — գտավ իրեն մեծ դռան առաջ:

Կանգ առավ ու զարմացավ: Ճանաչեց: Չէր հիշում, որ այդտեղ գալու միտք էր ունեցել: Բայց ո՞վ գիտե, գուցե մտածել էր գալ:

Մինչ այդ՝ մթնել էր կատարյալ: Ուղքով անցուդարձը սակավացել էր: Ավելի շատ՝ կառքեր էին փակված, թրջված մաղող անձրևից: Ջուրն ու ցեխը ցայտում էին այս-այն կողմ՝ գլորվող անիվների տակից:

Մի քանի անցորդներ տեսան դռան առաջ կանգ առած գունատ, երերուն բանվորին:

Ժպտեցին ու անցան: Հարբած էին կարծում: Գինետնից հետո այդտեղ՝ սովորական քայլն էր:

Դռնապանն էլ ապակեպատ փեղկիցը տեսավ: Դուռը բաց արավ ու ներս թողեց Ստեփանին:

Ներս մտավ, սակայն իսկույն նստեց նախազավթի նստարանի վրա:

Վեր ելնող սանդուղքի տակն էր: Վերևից լսվում էին ինչ-որ անորոշ աղմուկ, դաշնամուրի խորոց, քրքիջներ, երգի բեկորներ ու ընդհատ, խռպոտ խաղեր:

— Բարձրացի՛ր, — ասաց դռնապանը ժպտելով, — լավ ես կոնծել, հա՛...

Ստեփանը առանց հասկանալու նայեց նրան ու ոչինչ չխոսեց:

Հետո, երբ վերևում աղմուկը մեծանում էր, իսկ դռնապանը սպասում էր նրա ելնելուն — դանդաղորեն ելավ գնաց դեպի փողոցի դուռը:

— Ո՞ւր, — կանչեց զարմացած դռնապանը, — այդ կողմը չէ՛ ճանապարհը:

Ստեփանը ե՛տ իսկ չդարձավ: Գնաց ու փորձեց փակված դուռը:

— Բայց, լսի՛ր, բարեկամ, — մոտեցավ նրան դռնապանը, — այստեղից փողոց են գնում: Ա՛յ, աղջիկները այն կողմն են. բոլորն էլ սրահումն են այժմ. . .

Ստեփանը բաց արավ դուռը և փողոց ելավ:

Դռան առաջ կառք կար, ծածկոցն իջեցրած: Մտավ այնտեղ և կծկվեց մեջը:

Կառապանը դարձավ, նայեց նստողին, ձեռքի սանձերը ժողովեց ու հարցրեց.

— Որտեղի՞ց:

— Կայարան, — ասաց Ստեփանը խուլ ձայնով:

Առավոտյանից ի վեր՝ առաջին անգամն էր լսում իր ձայնը. խուլ, խռպոտ, ինչ-որ գերեզմանային ձայն, որ ցնցեց նրան ու սկսեց ուշքի բերել:

Ուղեղը ճնշող մշուշը փարատվում էր: Չարթնումն էր այն: Պարզվում էր այժմ շրջապատը: Կառքի ոստոստումները փութացրին սթափումը:

Որտե՞ր էր գնում, ինչո՞ւ էր քաղաք եկել, ինչո՞ւ էր կառքի մեջ:

Հիշեց բոլորը: Ո՛չ, մոռացության մեջ լիովին անգիտակից չէ՛ր կատարվածը: Աղոտ կերպով ընդնշմարեց եղածը:

Վառնել էին իրեն. եկել էր քաղաք հանգստանալու: Հետո մտածել էր կանանց մոտ գնալ, բայց տեղ հասած՝ զգվանք էր զգացել:

Ու հայրենիք վերադառնալու մի հանկարծակի կարոտ համակել էր նրան: Գնում էր կայարան: Փողը մոտն էր: Հարկավոր չէր ո՛չ աղտոտ անկողինը, ո՛չ էլ հանքերի մեջ մնացած մյուս իրեղենները: Ոչինչ չէր ուզում, միայն հայրենական տունը, իր երկրի մաքուր օդը, պայծառ երկինքը:

Այստեղ չէր կարողանում շնչել, օդ չկար, եղածը մուր էր, մշուշ, տանջա՛նք. . .

Կրծքի վրա քար էր ընկել, օհ, սոսկալի մի քար, որ ծանրանում էր, խեղդում. . .

Հիվա՛նդ էր արոյոք: Չլինի՞, իրավ մրսել էր գիշերը՝ հակադարձ քամիների մեջ:

Մի տաք բան լիներ գոնե. մի բաժակ օդի, մի ջերմ անկյուն, կակուղ անկողին և մի գուրգուրող ձեռք, օ՛հ, մի փափուկ աջ, որ շփեր նրա այրվող ճակատը, կանգ առներ չորացած շրթունքների վրա ու մի քանի կաթիլ ջուր, հայրենիքի ջրիցը մոտեցնել բերանին, խմեցներ, անվե՛րջ խմեցներ. . .

Եվ կամ լիներ մի գինետուն գոնե, ուր նա հարբեր, ընկներ զվարճության հորձանքը, մի բաժակ օդու մեջ խեղդեր և՛ վշտերը, և՛ հույսերը, և՛ ոսկի երազները. . .

Բայց կառքը սլանում էր, ոստոստում, ջրի և ցեխի շատրվաններ նետում աջ ու ձախ:

Կայարանը մոտ էր: Գնա՛լ ուրեմն: Հայրենի՛ք գնալ: Այդպես առանց ոչնչի՞, միայն մի հիսուն ռուբլիո՞վ:

Օ՛, ոչ. պետք էր ընծաներ քույրերին, եղբայրներին, պետք էր դեռ հագուստ և մանավանդ փող, որ պարտքը, իրենց պարտքը վճարելու փող. . .

Ո՛չ, դեռ պետք էր մնալ, դարձյա՛լ մտնել նավթի մեջ, մուրի տակ, դարձյալ խոնավության մեջ բորբոսնել, անքուն՝ մրսել քամիների տակ, տանջվել ու տանջվել:

Իսկ առայժմ, այդ թոպեին նրան հարկավոր էր մի տաք տեղ, մի բաժակ թեյ և մի ծածկոց: Անձրևը մաղում էր, խոնավությունը թափանցում էր մարմնի մեջ ամեն կողմից:

— Կառապան,— գոչեց նա խռպոտ կանչով և դուրս պարզեց գլուխը:

Կառապանը դարձավ: Ձայնը չէր լսել, բայց դիպել էին իրեն:

— Դարձիր ետ,— ասաց Ստեփանը:

— Ինչպե՛ս:

— Ե՛տ դարձիր:

— Չեմ լսում, բարձր խոսեք:

Հիրավի, ի՛նչ էր այն, ի՛նքն էլ չէր լսում իր ձայնը: Չէ՛ որ աղաղակում էր: Կտրվե՛լ էր ձայնը, թե՛ անհիվների աղմուկն էր պատճառը:

Ձեռքովը նշան արավ: Կառապանը զարմացած՝ կանգնեցրեց կառքը:

— Ինչո՞ւ,— ասաց նա,— կայարան չե՞ք գնում:

— Քաղաք. . . — ձեռքով ցույց տվավ Ստեփանը:

Գլուխը երերցուց կառապանն ու դարձավ:

Ստեփանը փորձեց խոսել, փողոցի անուն տալ, Կարապետի տան հասցեն ասել — բայց կարծես հանկարծ մեկը բռնեց նրա կոկորդից և չոքեց կրծքի վրա:

Խեղդվում էր. կողքի սոսկալի մի խիթը շնչասպառ արավ նրան:

Ճիգ գործեց, բռնեց կառքի երկու կողերից, կուրծքը ցցեց, ուզեց ելնել:

Բացավ բերանը, հուսահատ մի ճիչ արձակեց և թուլացած՝ ետ ընկավ կառքի մեջ. . .

Մութը թանձրանում էր հետզհետե. մառախուղը նստում էր փողոցներում: Լապտերները աղոտ ու ցորնեգույն լույս էին տարտղնում փոքրիկ շրջանների մեջ:

Եվ անձրևը մաղում էր, սրտմաշո՛ւք կերպով մաղում անընդհատ, անվերջ. . .

## Ե

Վերջապես տաքանալ էր սկսում: Դողն անցնում էր քիչ- քիչ:

Ավելի և ավելի փաթաթվեց մաքուր ծածկոցովն ու կամեցավ քնել:

Բժիշկը ոչինչ չէր տվել դեռ խմելու:

Հիվանդ էր: Հաստատել էին այդ և ներս ընդունել, պառկեցրել: Հայտարարել էին սակայն, որ պետք էր մյուս առավոտյան սպասել:

Ստադրեց քնել: Թեյ էլ էին տվել: Խնդրել էր, բերել էին: Լավ էր. տաքացել էր բավական: Մրսել էր անշուշտ, գուցե թեյը քրտնեցներ: Գիտեր, որ կարևոր էր քրտնելը: Գյուղումն էլ պատահել էր նման դեպք և մայրը վերմակների տակ դրած՝ քրտնեցրել էր նրան ու լավացրել:

Օ՛հ, լավ էր հիշում դեպքը: Սիրելի՛ պառավը: Անմիջապես հանվեցրել էր, կուրծքն ու մեջքը լավ, այրելու չափ լավ շփել էր դեռ ճարպով, հետո ոտները տաք ջրի մեջ դրած՝ իրեն էլ վերմակով փաթաթել, ստիպել էր խմել երկու բաժակ արքայամորու թեյը և ամենից հետո՝ պառկեցրել էր, տան մեջ եղած վերմակները ծածկել վրան, ինքն էլ սևարին նստել ու հսկել էր մինչև լույս:

Եվ լավացրել էր: Քրտնեցրել ու լավացրել:

Ո՛ւր էր այժմ այդպես բան: Ո՛չ տաք ջուր, ոչ վերմակներ, ո՛չ հայրենի սենյակն ու ծխից սևացած գերաններով առաստաղը. . .

Ճերմակ պատեր էին շուրջը: Քիչ հեռուն՝ մահճակալներ: Մարդի՛կ կային նրանց վրա: Փաթաթվել էին քնել: Խորդում էին, զանազան փշաքաղեցնող ձայներ հանում, տնքո՛ւմ, հառաչո՛ւմ. . .

Սակայն, ինչ որ է, դողը անցել էր գոնե: Տաքանում էր այժմ. մինչև իսկ շա՛տ տաքանում, չնայելով, որ վրան եղածը միայն մի վերմակ էր:

Ուրեմն սենյակն էր լավ տաքացրած, շա՛տ տաքացրած, որովհետև շրթունքները չորանալ սկսեցին, լեզուն թաց չէր կարծես. այրվում էր նույնիսկ:

Խմել կուզենար: Մի բաժակ ջո՛ւր:

Բայց ո՛չ, հիշում էր մոր պատվերը. այդպես ժամանակ սառը ջուր չէր կարելի:

— Համբերի՛ր, որդի, ջուրը վնաս կտա:

Ու թեյ էր տվել, մեջը ինչ-որ թթվաշ բան խառնած: Քաղցր ու թթվաշ:

Օ՛հ, եթե նման բան տային այժմ ևս: Բայց ո՛վ կտար: Ո՛չ որ չկար սենյակում: Հիվանդներ էին միայն: Գիշեր էր: Քնել էին ամենքը:

Պետք էր ուրեմն քնել: Ի՛նչ միտք ուներ արթուն մնալը:

Արդյոք կես գիշեր էր, թե՞ ավելի ուշ: Երևի կես գիշեր, որովհետև ոչ մի ձայն չկար, ո՛չ կառքի, ո՛չ խոսակցության:

Եվ զգաց, որ ավելի և ավելի էր տաքանում: Հնո՛ց էր ամբողջովին: Այրվում էին այտերը, ձեռքերն ու շրթունքները: Լեզուն չորանում էր, չէր շարժվում բերնի մեջ:

Իսկ քրտինք չկար: Չարմանալի՜ բան: Այդքան տաքություն, և քրտինքի ո՛չ մի նշան: Գունե քներ: Բայց մի՞թե քնած չէր արդեն:

Աչքերը բանալ չէր կարողանում: Ոչ էլ գլուխը շարժել: Քնածի պես էր, բայց զգում էր, որ քնած չէր:

Միտքը գործում էր. արթո՛ւն գործում: Աչքերն իսկ տեսնում էին: Փակ էին, բայց տեսնում էին: Ահա հենց այդ լուսավոր շրջանները, որ գծվում էին աչքերի դիմաց միմյանց ետևից: Կարմիր, բոցավառ շրջաններ էին, մեծ կլորներ, որ արագությամբ միմյանց էին բախվում, մոտենում ու հեռանում:

Օդեր չէի՞ն արդյոք միմյանց մեջ մտած, միմյանց կտորոզ: Ճախրում էին անասելի արագությամբ, ցուրքեր էին նետում, փայլուն գծեր նկարում օդի վրա. . .

Բայց ո՛չ, օդեր չէին. լավ չէր տեսել. Օդն ինքն էր այդ, որ շերտ-շերտ, ավեճև ետ էր մղվում: Ճիշտ այնպե՛ս, ինչպես ջուրը՝ մեջը նետված քարի ժամանակ:

Ետ էր մղվում ամեն կողմից, ծալծալ ու երերուն՝ օրորվում. . . որովհետև, այո՛, Ստեփանը սկսել էր թռնել, այլանդակորե՛ն թռնել. . .

Ահա՛, զգում էր նա. ոտները գետնին չէին առնում այլևս. թռնում էր ո՛չ թե փռված փորի վրա ինչպես թռչուն, այլ ուղիղ կանգնած, առանց թևերի, առանց ձեռքերն իսկ տարածելու. . .

Ու սավառնում էր վայելչորեն: Օդը առջևից ետ էր մղվում, գեղեցիկ երերումով հեռանում, արևի փայլի տակ ցուլում, ոսկի գծեր տպում տարածության մեջ:

Իսկ տներն ու դաշտերը, լեռներն ու ձորերը ոտքի տակ, խորքում՝ հետևում էին միմյանց, վազում, ետ գնում. . .

Բայց հանկարծ ամեն ինչ փոխվեց: Թռիչքը դադարել էր: Ի՞ր կամքովն էր արդյոք, թե՞ մի անհայտ ձեռք էր արել այդ, սակայն իրեն գտավ այժմ էլ մի ահագին ձորի խորքում:

Ամենից առաջ գետի շռիղին էր, որ հնչեց ականջին: Այդ դռնչոցը չդադարեց: Խլացնում էր ամեն ինչ: Մի տասնյակ թմբուկներ լինեին կարծես, որ մռնչում էին նրա ականջների մեջ:

Օ՛հ, կատաղի գետ: Ինչպե՛ս փրփրադեզ գլորվում էր նա ժայռից ժայռ, պայթում ապառաժների դեմ, ջրափոշի ցնցուղում օդի մեջ, նետվո՛ւմ դեպի մուգ ձորձորները. . .

Ահա և հսկայական ապառաժուտ կողեր, վիթխարի լերկ գանգերի նման փայլուն կատարներ. . .

Բայց որքան տո՛թ էր այդտեղ, որպիսի՜ հեղձուցիչ օդ, մեռելային անշարժություն. . . Շնչել չէր լինում:

Այնուամենայնիվ քիչ-քիչ դրանք էլ հալվել սկսեցին: Այո՛, հալվել: Գետի ձայնն էր միայն, որ թեև մեղմացած, բայց դռնչում էր ականջի մեջ: Իսկ ապառաժներն ու ձորերը խառնվում էին իրար, միապաղաղ սև զանգված կազմում ու հոսում անցնում. . .

Եվ մոռացությունը հաջորդեց դրան: Մի թանձր, ճնշող մոռացություն, որ, չնայելով նրա ճիգերին, հրեշի նման պարզեց ճանկերը, հրաշեկ ճիրաններով խլեց իր թռիչքի միջից, վար նետեց և ծածկեց անթափանց խավարի տակ. . .

Հետո, մեկե՛ն երևան եկավ վերևից դեպի նրա կուրծքն իջնող մի խոշոր, սոսկալի կռան, որ գալիս էր համրորեն, զարհուրելի համառությամբ, գալիս էր առանց կանգ առնելու:

Մինչև մազերի արմատները փշաքաղվեց նրա մարմինը: Սոսկումը կտրեց նրա շունչը: Ճիգ գործեց փախչել, ելնել կամ ետ քաշվել, բայց չկարողացավ ոչ մի շարժում անել:

Ու մնաց այնտեղ գամված, վիթխարի գանգվածի տակ պառկած, վայրկյան առ վայրկյան փշրվելու, ճգմվելու վտանգի մեջ:

Ա՛հ, օգնեցե՛ք, ազատեցե՛ք թշվառին, ապրել է ուզում դեռ: Գոնե մի քիչ, մի օր ապրել, ծնողներին տեսնել, հայրենիքի օդը շնչել, իր դաշտն ու լեռը վայելել. . . Մի հատ օր, միայն մի օր. . .

Բայց կռանը-հրեշը իջնում էր, իջնում անվրդով, անկասելի: Նրա հանած շշուկը մահաշունչ քամու նման զգում էր արդեն. . . և սակայն ո՛չ մի օգնություն, ո՛չ ոք, ո՛չ մի ձեռք, ո՛չ մի ձայն, Եվ Ստեփանը գերբնական ու հուսահատ մի ճիգ գործեց, օրհասական շարժումով ջանաց դուրս նետվել մղձավանջի փարումից, ջանաց ազատել կուրծքը, շնչել, գոռա՛լ. . .

—————

Տասներորդ օրվա մթնշաղին Ստեփանը իրեն լավ զգաց. չկար այլևս մղձավանջը: Բայց շնչել չէր կարողանում: Կարծես թոքերը հանել էին կուրծքից: Դատարկություն էր այնտեղ:

Չնայելով դրան, մշուշոտ չէր ուղեղն այլևս: Հասկանում էր ամեն ինչ. տեսնում էր. ճանաչում հիվանդապահին: Ճանաչեց նաև մի մաշված աղջկա, որ խնամում էր իրեն, իսկ այժմ իր շրթուկներին էր մոտեցնում բաժակը և մեղմ ասում.

— Խմի՛ր, դեղդ է:

— Իսկ օ՞ղ,— ասաց նա,— օղ չե՞ք կարող տալ ինձ, չկա՞. . .

Ժպտեց հիվանդի այդ ցավագին հարցի վրա սպիտակ հագած աղջիկը: Ժպտեց դառն. վշտալից ժպիտով, չոր ձեռքը դրեց Ստեփանի ճակատին ու լուռ մնաց:

Հետո կամաց-կամաց տեսավ, որ վառեցին լույսերը: Աղոտ էին ու կարծես փոշոտ: Նարնջի գույն ունեին. կարմիր ու դեղին:

Գնացող-եկողներ էլ եղան սենյակի մեջ: Ինչ-որ մարդ մոտ եկավ, բազուկը առավ ձեռքի մեջ, պահեց, հետո ցած թողեց ու գնաց. . .

Դրանից հետո քիչ-քիչ լույսերը սկսեցին աղոտանալ. կարծես հեռանում էին արագ, մի առ մի մարում: Հետո զգաց, որ հետզհետե հալվում, անհետանում էին նույնպես պատերն ու առաստաղը, մահճակալները. ամեն ինչ: Բայց երկիկները, պայծառ արևով ողողուն երկիկները լողում անցնում էր նրա գլխի վրայով:

Եվ նա սավառնում էր դարձյալ տարածության մեջ՝ իր սահուն ու կանգուն թռիչքով, անհունապես երջանիկ, որովհետև գնում էր իջնելու իր գյուղը, հայրենական տան հարկի տակ:

Սիրտը ուռում էր ուրախությունից, տրոփում էր պայթելու չափ: Այնտեղ, իր շուրջն էին նորից մայրն ու հայրը, քույրն ու եղբայրները: Այնտեղ էր նաև Թագուհին, իր կարոտած, իր ցանկալի Թագուհին, որ մոտենում էր նրան, ժպտում ու բարևում: Ամենքը սիրալիր՝ շրջապատում էին նրան:

Եվ ուրախ էին, ակներև ուրախ, որ իրենց Ստեփանը եկել էր առողջ, տուն էր վերադարձել և պանդխտության մեջ չէր կորել, կամ մեռել. . .

Այնքան մեծ էր իր ուրախությունն էլ, այնքան լի էր կուրծքը բերկրությամբ, որ շունչը բռնվեց և թվաց թե խեղդվում էր. . .

Բայց ահ, երջանիկ էր, խեղդվում էր, բայց երջանիկ էր:

Ու երանավետ մի անդորրություն ահա սկսեց իջնել նրա վրա, թափանցել մարմնի մեջ: Բոլոր անդամները թեթևանում էին մի առ մի. կարծես այլևս չկային, գոյություն չունեին. . .

Անեություն էր այն, երջանիկ անեությունը: Այլևս ո՛չ մտածություն, դառն խոհեր, ո՛չ զգայնություն, կսկիծ ու տանջանքներ:

Ոչինչ, միայն ոչինչն էր. երջանիկ ոչինչը. . .

Եվ այնուհետև էր, որ մնաց նա անշարժ իր երանավետ անդորրությանը մեջ, գունատ և տամուկ ճակատովը պառկած ճերմակ անկողնի վրա, անփայլ աչքերը տարածության մեջ մոլորուն, անդրաշխարհային երազներով քողավորված:

Դեմքը, սպիտակ այն դեմքը այժմ սկսում էր ստանալ ծանր և լուրջ խաղաղություն:

Հարթվում, հղկվում էր ամեն կնճիռ: Չկային այլևս վշտալից ակոսները: Շրթունքների անկյուններում միայն սառել-մնում էին ինչ-որ խորունկ, խորհրդավոր գծեր, որոնք բողբոջի զայրագին շեշտեր լինեին կարծես՝ ուղղված մթնոլորտը չափազանց ճնշող անարդարությունների դեմ. . .

Դրսում մութը թանձրանում էր շարունակ. մառախուղը պատում էր փողոցները, լապտերների լույսերն այլևս ուժ չունեին և անձրևը մաղում էր, սրտմաշո՛ւք կերպով մաղում անընդհատ. . .